ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2025թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ Հ. 3/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԲԵՏՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԴԻՉ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում են տնտեսական կամ այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև նման գործունեություն իրականացնող օբյեկտների նախագծումն ու կառուցումը, եթե դրանք կարող են հանգեցնել մարդու առողջության վատթարացման, բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդի ոչնչացման, մարդու և շրջակա բնական միջավայրի համար անդառնալի հետևանքների: Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի (այսուհետ՝ Նորմեր) 120-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ բետոնի արտադրության գործարանը դասակարգվում է չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ շարքին: Նորմերի 116-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործության աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական, արտադրական օբյեկտների շենքերի և շինությունների համար՝ կախված հզորությունից, շահագործման պայմաններից, շրջակա միջավայր արտանետվող աղտոտիչների բնույթից և քանակից, առաջացող աղմուկից, թրթռումից և այլ վնասակար ֆիզիկական գործոններից, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներից, ինչպես նաև հաշվի

առնելով շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց անբարենպաստ ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, արդյունաբերական, արտադրական օբյեկտների սանիտարական դասակարգմանը համապատասխան, սահմանվում են սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը՝ (...) 4) չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 100 մ: Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում սանիտարապաշտպանական գոտու չափը չի պահպանվում, քանի որ մոտակա բնակելի շինությունը գտնվում է 93,7 մետր հեռավորության վրա: Նորմերի 97-րդ կետի համաձայն՝ III, IV և V վտանգավորության դասերի արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանական գոտիների սահմանումը, չափերի փոփոխությունը, որոնք ներառվում են սանիտարապաշտպանական գոտու նախագծում, իրականացվում է, հիմք ընդունելով. 1)առողջապահության ոլորտում գործող օրենսդրական պահանջները, սանիտարական կանոնները, 2)սանիտարապաշտպանական գոտու նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական եզրակացությունը և դրանում ներառվող առողջապահության ոլորտի պետական լիազորված մարմնի եզրակացությունը/կարծիքը, ինչը տվյալ նախատեսվող գործունեության դեպքում նախաձեռնողի կողմից չի պահպանվել:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

«__»_____ 2025թ.

ք. Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ Հ. 3/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԲԵՏՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԴԻՉ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

29.11.2024թ. Երևանի քաղաքապետարան (գրանցման համար Դ-151825-24) մուտք է գործել «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի դիմումը՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարան կառուցելու և ջարդիչ կայան տեղադրելու նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսում կազմակերպելու մասին:

Կատարվել է շահագրգիռ հանրության ծանուցում, նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ծանուցումն օրենքով սահմանված կարգով տեղադրվել է «Առավոտ» օրաթերթում և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարան կառուցելու և ջարդիչ կայան տեղադրելու նախատեսվող գործունեության վերաբերյալ ս.թ. հունվարի 13-ին ժամը 11:00-ին Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում օրենքով սահմանված կարգով տեղի է ունեցել առաջին հանրային լսումը: Համայնքի կողմից ապահովվել է համայնքի ներկայացուցչի մասնակցությունը:

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ կետի՝ արգելվում են տնտեսական կամ այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև նման գործունեություն իրականացնող օբյեկտների նախագծումն ու կառուցումը, եթե դրանք կարող են հանգեցնել մարդու առողջության վատթարացման, բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդի ոչնչացման, մարդու և շրջակա բնական միջավայրի համար անդառնալի հետևանքների:

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի (այսուհետ՝ Նորմեր) 120-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ բետոնի արտադրության գործարանը դասակարգվում է չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ շարքին: Նորմերի 116-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործության աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական, արտադրական օբյեկտների

շենքերի և շինությունների համար՝ կախված հզորությունից, շահագործման պայմաններից, շրջակա միջավայր արտանետվող աղտոտիչների բնույթից և քանակից, առաջացող աղմուկից, թրթռումից և այլ վնասակար ֆիզիկական գործոններից, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց անբարենպաստ ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, արդյունաբերական, արտադրական օբյեկտների սանիտարական դասակարգմանը համապատասխան, սահմանվում են սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը՝ (...) 4) չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 100 մ: Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում սանիտարապաշտպանական գոտու չափը չի պահպանվում, քանի որ մոտակա բնակելի շինությունը գտնվում է 93,7 մետր հեռավորության վրա: Նորմերի 97-րդ կետի համաձայն՝ III, IV և V վտանգավորության դասերի արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանական գոտիների սահմանումը, չափերի փոփոխությունը, որոնք ներառվում են սանիտարապաշտպանական գոտու նախագծում, իրականացվում է, հիմք ընդունելով. 1)առողջապահության ոլորտում գործող օրենսդրական պահանջները, սանիտարական կանոնները, 2)սանիտարապաշտպանական գոտու նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական եզրակացությունը և դրանում ներառվող առողջապահության ոլորտի պետական լիազորված մարմնի եզրակացությունը/կարծիքը, ինչը տվյալ նախատեսվող գործունեության դեպքում նախաձեռնողի կողմից չի պահպանվել:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 27-րդ կետի համաձայն՝ հանրային լսումների պատասխանատուն, հանրային լսման արձանագրությունն ու տեսաձայնագրությունը ներկայացրել է համայնքի ավագանուն և նախաձեռնողին:

Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն են՝ համայնքին առնչվող հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի ավագանու կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրումը: Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է՝ հանրային լսումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, համայնքի ավագանին որոշում է ընդունում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ, որը պետք է պարունակի հիմնավորումներ դրա պատճառների մասին, իսկ 6-րդ մասով սահմանվում է՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում համայնքի ավագանու կողմից որոշում չկայացվելու դեպքում նախաձեռնողը փաստաթղթերի փաթեթը

կարող է փորձաքննության ներկայացնել առանց համայնքի ավագանու նախնական համաձայնության:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» N1325-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 28-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին հանրային լսումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ, որը պետք է պարունակի հիմնավորումներ դրա պատճառների, այդ թվում՝ որոշման հավելվածի 8-րդ կետում նշված բացառությունների (առկայության դեպքում) մասին:

Որոշման հավելվածի 29-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշման կայացման օրվանից հետո՝ 5-օրյա ժամկետում, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված դեպքում համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, լիազոր մարմնին և նախաձեռնողին է տրամադրում համայնքի ավագանու որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունները, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները:

Հիմք ընդունելով վերը նշվածը, Երևան համայնքի ավագանու համաձայնեցման է ներկայացվում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարան կառուցելու և ջարդիչ կայան տեղադրելու նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ որոշման նախագիծը՝ հիմք հանդիսացող անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ